ԺԳ.

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — ՌՃԲ = 1653, ՆՈՅԵՄ. 5.

(Առաքէ ի Լով զՅովհան վ. և. արքեպիսկոպոս՝ ի Նուիրակ և. քարոզիչ խաղաղութեան):

Է՛

Յ**ԻՍՈՒՍԻ** *Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարգ Վաղարշապատու, վերնադիտակ և յաղթնատարաս, տիրանկար և գերապայծառ, վեհափառ և հրեշտակապար, լուսակառոյց և քրիստոսամատոյց սրբոյ աթոռոյ Էջմիածնի. Յորմէ ժամանեալ հասցէ գիր աւրհնութեան և նամակ պահպանութեան, շնորհք առաքելական և աստուածային աւրհնութիւն ի վերայ տիրապահ քաղաքիդ Իլովայ, եկեղեցեաց, քահանայից, խոհեմամիտ և ուղղագործ դատաւորաց, մեծապատիւ և իշխանաշուք պարոն երեսփոխանաց. բարեփառ և ուղղադաւան ժողովրդոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, և ամենայն չափու հասակի հաւատացելոց ի Տէր, մեծամեծաց և փոքունց. ամէն: Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, և ի Հոգւոյն Սրբոյ կենարարէ և յառատաձիր բարերարէ և ամենազօր մարդասիրէ և կենսաբաշխ պարգեւատուէ. ամէն: Աւրհնեսցէ զձեզ Տէր Աստուած մեր և զարդարեսցէ հոգւով և մարմնով, տամբք և տեղօք, զարմօք և զաւակօք, որդովք և դստերօք, սիրելեօք և բարեկամօք, ընչիւք և ապրանօք, և ամենայն գոյականօք. ամէն:*

Ընդ սիրոյ աւրհնութեանս յուշ լիցի վերոյ գրեալ հոգեւոր սիրելեաց մերոց հարազատ որդոց Ս. Լուսաւորչին. զի ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի՝ որ ասէ, Հոգք ամենայն եկեղեցեաց ի վերայ իմ կայ. և զկնի, Ո՞ հիւանդանայ, և ես ոչ հիւանդանամ. առ մեզ տեսանի, սակս առ մեզ յանձին եղեալ եկեղեցեաց. մանաւանդ վասն ձեր. զի յօրէ յորմէ հետէ դառնագոյն վիշտդ այդ պատահեալ է ձեզ, որպէս ծածկագիտին յայտնի է, զտիւ և զգիշեր անհանգիստ կամք, և միշտ աղէկիզիմք և տոչորիմք վասն ձեր. և ուստեք ճարակ ոչ գտանեմք. վասն այն յուսահատեալ և տարակուսեալ մնամք, ըստ իմաստնոյն բանի՝ որ ասէ, Երկար հիւանդութիւն ձանձրացուցանէ ըզ-